Նախագիծ

Լրամշակված

Պ-521-23.03.2020-ՏՏԳԲ-011/0

ՏԵՂԵԿԱՆՔ
««ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔԱՆԿԱՌԱՎԱՐՄԱՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 1. «Տեղական իքնակառավարման մասին » 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337-Ն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետը շարադրել նոր բովանդակությամբ.

~~19) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով, ճանապարհային ոստիկանության հետ համաձայնեցնելուց հետո կազմում և ավագանու հաստատմանն է ներկայացնում՝ համայնքում ճանապարհային երթևեկության կազմակերպման (համայնքային ենթակայության ճանապարհների մասով), Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհների անվանացանկում ընդգրկված ճանապարհների մաս հանդիսացող տարանցիկ ճանապարհների (բացառությամբ Երևան քաղաքի) սխեման և կայացնում է որոշումներ՝ այդ սխեմային համապատասխան անվտանգ երթևեկության կազմակերպման համար անհրաժեշտ ճանապարհային կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների տեղադրման վերաբերյալ։~~

19) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով կազմում և տրանսպորտի բնագավառի լիազոր մարմնի հետ համաձայնեցնելուց հետո համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքում ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեման (համայնքային ենթակայության ճանապարհների մասով) և կայացնում որոշումներ ՝ այդ սխեմային համապատասխան անվտանգ երթևեկության կազմակերպման համար անհրաժեշտ ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի ու այլ

տեխնիկական միջոցների տեղադրման վերաբերյալ՝ երթևեկության անվտանգության մասով համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության ոստիկանության հետ:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: